ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2002 թվականի հուլիսի 3-ին

ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հոդված 23. Մաքսային ծառայողի հիմնական իրավունքները

(վերնագիրը լրաց. 21.01.20 ՀՕ-18-Ն)

1. «Հանրային ծառայության մասին» օրենքի 18-րդ հոդվածով նախատեսված հիմնական իրավունքներից բացի, մաքսային ծառայողների հիմնական իրավունքներն են՝

1) ***(կետն ուժը կորցրել է 21.01.20 ՀՕ-18-Ն)***

2) ծառայողական պարտականությունների կատարման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ստանալ տեղեկություններ և փաստաթղթեր.

3) ***(կետն ուժը կորցրել է 21.01.20 ՀՕ-18-Ն)***

4) մաքսային ծառայության գծով առաջխաղացման և վարձատրության չափերի մեծացման՝ հաշվի առնելով ծառայած տարիները, ծառայության արդյունքները և վերապատրաստման մակարդակը.

5) ***(կետն ուժը կորցրել է 21.01.20 ՀՕ-18-Ն)***

6) Հայաստանի Հանրապետության մաքսային մարմինների պահպանման համար հատկացված միջոցների հաշվին վերապատրաստվել.

7) ***(կետն ուժը կորցրել է 21.01.20 ՀՕ-18-Ն)***

8) պահանջել Կառավարության սահմանած կարգով ծառայողական քննության անցկացում՝ իր պատիվը և արժանապատվությունը վարկաբեկող տեղեկությունները, իր կարծիքով անհիմն մեղադրանքները հերքելու և վերացնելու նպատակով.

9) օգտագործել ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ, ինչպես նաև զենք ~~հրազեն~~՝ սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

10) ***(կետն ուժը կորցրել է 21.01.20 ՀՕ-18-Ն)***

11) ***(կետն ուժը կորցրել է 21.01.20 ՀՕ-18-Ն)***

2. ***(մասն ուժը կորցրել է 21.01.20 ՀՕ-18-Ն)***

(23-րդ հոդվածը փոփ. 24.12.04 ՀՕ-71-Ն, լրաց. 18.11.09 ՀՕ-212-Ն, փոփ. 12.12.13 ՀՕ-178-Ն, 23.03.18 ՀՕ-263-Ն, լրաց., փոփ. 21.01.20 ՀՕ-18-Ն)

(21.01.20 ՀՕ-18-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 26. Մաքսային մարմնի հանրային ծառայողների կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների ու զենքի կիրառման հիմքերը, պայմանները և սահմանները ~~օգտագործման դեպքերը և կարգը~~

1.Մաքսային մարմնի հանրային ծառայողներին թույլատրվում է իրենց պաշտոնեական պարտականությունները կատարելիս կրել և պահել օրենքով նախատեսված զենք ու հատուկ միջոցներ: Նրանք իրավունք ունեն սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ֆիզիկական ուժ, ինչպես նաև հատուկ միջոցներ և զենք կիրառել: Նախքան հատուկ միջոցների և զենքի կիրառման իրավասություն ստանալը մաքսային մարմնի հանրային ծառայողները, մաքսային մարմնի ղեկավարի սահմանած կարգով անցնում են հատուկ պատրաստություն (ուսուցում):

2.Ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և զենք կիրառելու նպատակահարմարությունը դիտարկելիս, ինչպես նաև տեսակի ընտրությունը կատարելիս մաքսային մարմնի հանրային ծառայողն առաջնորդվում է՝ ելնելով ստեղծված իրավիճակից, իրավախախտման բնույթից ու իրավախախտի անձից:

~~1. Մաքսային մարմնի հանրային ծառայողն իրավունք ունի գործադրելու ֆիզիկական ուժ, կիրառելու հատուկ միջոցներ, ինչպես նաև հրազեն՝ սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով: Նախքան ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի օգտագործման իրավասություն ստանալը, այնուհետև՝ պարբերաբար, մաքսային մարմնի հանրային ծառայողները, կոմիտեի սահմանած կարգով անցնում են հատուկ պատրաստություն և պիտանիության ստուգումներ: Նշված անձինք պարտավոր են ունենալ նաև տուժածներին առաջին բուժօգնություն ցուցաբերելու հմտություն:~~

~~2. Սույն օրենքի 27-29-րդ հոդվածներով նախատեսված դեպքերում և կարգով՝ մաքսային մարմնի հանրային ծառայողն իրավունք ունի կիրառել ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և զենք:~~

3. Մաքսային մարմնի հանրային ծառայողը ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ և զենք կիրառելուց առաջ նախազգուշացնում է դրանք կիրառելու ~~այդ մտադրության~~ մասին՝ ~~տալով իր պահանջները կատարելու համար~~ բավարար ժամանակ տրամադրելով օրինական պահանջները կատարելու և ենթադրյալ հանցագործությունը դադարեցնելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դրանց կիրառման հապաղումն անմիջական սպառնալիք է ստեղծում քաղաքացիների կամ մաքսային մարմնի հանրային ծառայողի կյանքի, առողջության համար կամ կարող է առաջացնել այլ ծանր հետևանքներ ~~անակնկալ, զինված, ռազմական տեխնիկայի և տրանսպորտային այլ միջոցների օգտագործմամբ հարձակումների և այլ իրադրությունների, եթե նման նախազգուշացումն ստեղծված իրավիճակում անտեղի է, անհնարին կամ կարող է առաջացնել վտանգ իր կամ այլ անձանց կյանքին և առողջությանը, հանգեցնել այլ ծանր հետևանքների:~~

4. Իրավախախտման վտանգավորության աստիճանից և դա կատարող անձի ինքնությունից, ինչպես նաև դիմադրության ուժից ելնելով՝ վտանգի վերացմանն ուղղված գործողությունների հետևանքով հնարավոր վնասները մաքսային մարմնի հանրային ծառայողը պետք է հասցնի նվազագույնի:

5. Օրենքով չնախատեսված դեպքերում մաքսային մարմնի հանրային ծառայողի կողմից ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի կիրառումը կամ սահմանների

անցումով դրանց կիրառումն առաջացնում է պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

6. Մաքսային մարմնի հանրային ծառայողն իր կողմից զենքի կիրառման յուրաքանչյուր դեպքի, ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ, զենք կիրառելու հետևանքով մարմնական վնասվածքի կամ մահվան բոլոր դեպքերի մասին վերադասության կարգով անհապաղ գրավոր տեղեկացնում է մաքսային մարմնի ղեկավարին, իսկ վերջինս էլ ֆիզիկական ուժ, հատուկ միջոցներ, զենք կիրառելու հետևանքով մարմնական վնասվածքի կամ մահվան բոլոր դեպքերի մասին անհապաղ տեղեկացնում է ՀՀ գլխավոր դատախազին:

~~5. Ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի կիրառման դեպքում մաքսային մարմնի հանրային ծառայողն անմիջապես զեկուցում է վերադասության կարգով, իսկ զենքի կիրառման բոլոր դեպքերի մասին՝ նաև դատախազին:~~

~~Ֆիզիկական ուժի, հատուկ միջոցների և զենքի կիրառման հետևանքով առաջացած մարմնական վնասվածքների, մահվան բոլոր դեպքերի մասին մաքսային մարմնի ղեկավարը կամ նրան փոխարինող պաշտոնատար անձն անմիջապես տեղյակ է պահում առողջապահության համապատասխան մարմնին և իրավասու դատախազին:~~

(26-րդ հոդվածը խմբ. 07.04.09 ՀՕ-96-Ն, փոփ. 23.03.18 ՀՕ-263-Ն, լրաց. 21.01.20 ՀՕ-18-Ն, փոփ. 09.06.22 ՀՕ-169-Ն)

(21.01.20 օրենքն ունի անցումային դրույթ)

(09.06.22 օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 27. Ֆիզիկական հարկադրանքի (ուժի) կիրառումը

Մաքսային մարմնի հանրային ծառայողները, իրենց պարտականությունների կատարման ընթացքում, իրավունք ունեն իրավախախտների նկատմամբ կիրառել ֆիզիկական հարկադրանք (ուժ)՝

1) իրենց կամ այլ անձանց վրա կատարված հարձակումը կանխելու համար.

2) մաքսային մարմիններին պատկանող կամ վերջիններիս հսկողության տակ գտնվող շինությունների կառույցների և տրանսպորտային միջոցների վրա կատարված հարձակումը կանխելու համար.

3) իրենց գործառույթների իրականացումը խոչընդոտող իրավախախտին վարչական ձերբակալության ենթարկելու կամ մաքսային մարմնի շենք կամ դրան փոխարինող այլ շինություն հասցնելու համար:

(27-րդ հոդվածը լրաց. 21.01.20 ՀՕ-18-Ն, փոփ. 25.10.23 ՀՕ-318-Ն)

(21.01.20 ՀՕ-18-Ն օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 28. Հատուկ միջոցների կիրառումը

1.Հատուկ միջոցները Կոմիտեի սպառազինության մեջ ընդգրկված և սույն օրենքով նախատեսված տեխնիկական միջոցները (սարքերը, սարքավորումները, առարկաները, նյութերը) կամ ծառայողական շներն են, որոնց հիմնական նշանակությունը մարդկանց նկատմամբ անմիջական ֆիզիկական, հոգեբանական կամ նյութական օբյեկտների, տրանսպորտային միջոցների նկատմամբ անմիջական ֆիզիկական ներգործությունն է: ~~1. Մաքսային մարմնի հանրային ծառայողներն իրավունք ունեն կիրառել ձեռնաշղթաներ, ռետինե մահակներ, արցունքաբեր նյութեր, փականքները բացելու գործիքներ, տրանսպորտային միջոցները հարկադրաբար կանգնեցնելու համար նախատեսված միջոցներ, էլեկտրահարող սարքեր, կայծային պարպիչներ, ծառայողական շներ, ուշադրությունը շեղող լուսաձայնային միջոցներ:2.~~ Իրենց պաշտոնեական պարտականությունները կատարելիս մաքսային մարմնի հանրային ծառայողները հատուկ միջոցներ կարող են կիրառել՝

1) իրենց և (կամ) այլ անձանց վրա կատարված հարձակումը խափանելիս.~~կանխելու համար.~~

2) ենթադրյալ հանցանքի կատարման պահին կամ հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում բռնված և փախուստի փորձ կատարող անձանց բռնելիս.

3) երբ բավարար հիմքեր կան ենթադրելու, որ տվյալ անձը կամ անձինք պատրաստվում են զինված դիմադրություն ցույց տալ.

4) դիմադրություն ցույց տվող իրավախախտին վարչական ձերբակալության ենթարկելու կամ մաքսային մարմնի շենք կամ դրան փոխարինող այլ շինություն հասցնելու համար, երբ վերջիններիս վարքագիծը հիմք է տալիս ենթադրելու, որ նրանք կարող են դիմել փախուստի, վնաս պատճառել իրենց կամ շրջապատին.

5) ենթադրյալ հանցանք կատարող կամ կատարած անձանց հայտնաբերելիս:

6) մաքսային հսկողության իրականացման շրջանակներում՝ Հայաստանի Հանրապետություն ապօրինի ներմուծվող կամ Հայաստանի Հանրապետությունից ապօրինի արտահանվող թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների, զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի, պայթուցիկ սարքերի և յուրահատուկ հոտ ունեցող այլ ապրանքների որոնման ժամանակ.

7) ապացուցողական գործողությունների և օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման շրջանակներում՝ թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների, զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի, պայթուցիկ սարքերի և յուրահատուկ հոտ ունեցող այլ ապրանքների որոնման ժամանակ:

~~2) մաքսային մարմնին պատկանող կամ նրա հսկողության տակ գտնվող շինությունների, կառույցների և տրանսպորտային միջոցների վրա կատարված հարձակումը կանխելու համար.~~

~~3) իրենց գործառույթների իրականացումը խոչընդոտող իրավախախտին վարչական ձերբակալության ենթարկելու կամ մաքսային մարմնի շենք կամ դրան փոխարինող այլ շինություն հասցնելու համար, եթե այդ դիմադրությունը կարող է վնաս պատճառել շրջապատին կամ իրենց.~~

~~4) տրանսպորտային միջոցը կանգնեցնելու համար, եթե դրա վարորդը չի կատարում մաքսային ծառայողի օրինական պահանջները:~~

2. Մաքսային մարմնի հանրային ծառայողները, որպես հատուկ միջոցներ, կարող են կիրառել՝

1) ռետինե մահակներ՝ սույն հոդվածի առաջին մասի 1-3-րդ կետերով նախատեսված դեպքերում.

2) արցունքաբեր, գրգռիչ նյութեր, ծխաբողարկող միջոցներ, ռետինե գնդակներով փամփուշտներ՝ սույն հոդվածի առաջին մասի 1-3-րդ կետերով նախատեսված դեպքերում.

3) ձեռնաշղթաներ՝ սույն հոդվածի առաջին մասի 2-րդ և 4-րդ կետերով նախատեսված դեպքերում.

4) ուշադրությունը շեղող լուսաձայնային միջոցներ՝ սույն հոդվածի առաջին մասի 1-ին, 3-րդ կետերով նախատեսված դեպքերում.

5) էլեկտրահարող սարքեր, կայծային պարպիչներ՝ սույն հոդվածի առաջին մասի 1-3-րդ կետերով նախատեսված դեպքերում.

6) հատուկ ներկող նյութեր՝ սույն հոդվածի առաջին մասի 5-րդ կետով նախատեսված դեպքերում.

7) ծառայողական շներ՝ սույն հոդվածի առաջին մասի 1-4-րդ և 5-7-րդ կետերով նախատեսված դեպքերում:

~~2.1. Սույն հոդվածի 2-րդ մասով սահմանված դեպքերից բացի, մաքսային մարմնի հանրային ծառայողները ծառայողական շներ կարող են կիրառել նաև՝~~

~~1) մաքսային հսկողության իրականացման շրջանակներում՝ Հայաստանի Հանրապետություն ապօրինի ներմուծվող կամ Հայաստանի Հանրապետությունից ապօրինի արտահանվող թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների, զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի, պայթուցիկ սարքերի և յուրահատուկ հոտ ունեցող այլ ապրանքների որոնման ժամանակ.~~

~~2) ապացուցողական գործողությունների, գաղտնի քննչական գործողությունների և օպերատիվ-հետախուզական միջոցառումների իրականացման շրջանակներում՝ թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի և դրանց պրեկուրսորների, զենքի, ռազմամթերքի, պայթուցիկ նյութերի, պայթուցիկ սարքերի և յուրահատուկ հոտ ունեցող այլ ապրանքների որոնման ժամանակ:~~

~~2.2.~~3. Ծառայողական շների կիրառման, վարժեցման և պահման կարգը հաստատվում է մաքսային մարմնի ղեկավարի հրամանով:

4. Հատուկ միջոցների բոլոր տեսակները կարող են կիրառվել նաև սույն օրենքի 29-րդ հոդվածի առաջին մասով նախատեսված դեպքերում:

5. Արգելվում է հատուկ միջոցները կիրառել հղիության նկատելի նշաններով կանանց, ակնհայտ հաշմանդամների և անչափահասների նկատմամբ (բացառությամբ նրանց կողմից զինված հարձակում գործելու, զինված դիմադրության, մարդկանց կյանքին, առողջությանն սպառնացող խմբակային հարձակման դեպքերի), դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների տարածքներում (բացառությամբ այն դեպքերի, երբ հատուկ միջոցները կիրառվում են դրանց լիազոր ներկայացուցիչների խնդրանքով), ինչպես նաև մարտավարատեխնիկական բնութագրերով պայթյունավտանգ հատուկ միջոցները՝ այն շենքերում (շինություններում), որտեղ արտադրվում կամ պահվում են դյուրավառ կամ պայթուցիկ նյութեր:

~~3. Հղիության կամ հաշմանդամության ակնհայտ նշաններով անձանց, անչափահասների նկատմամբ հատուկ միջոցներ չեն կիրառվում, բացառությամբ նշված անձանց կողմից զինված դիմադրություն ցույց տալու, խմբակային կամ այլ հարձակումների, մարդկանց կյանքի և առողջության համար վտանգավոր գործողությունների դեպքերի:~~

(28-րդ հոդվածը լրաց. 21.01.20 ՀՕ-18-Ն, 26.05.21 ՀՕ-216-Ն, փոփ. 09.06.22 ՀՕ-169-Ն, 25.10.23 ՀՕ-318-Ն)

(21.01.20 օրենքն ունի անցումային դրույթ)

(09.06.22 օրենքն ունի անցումային դրույթ)

Հոդված 29. Շենքի կիրառումը (գործադրումը և օգտագործումը)

1.Մաքսային մարմնի հանրային ծառայողները իրենց պաշտոնեական պարտականությունները կատարելիս մաքսանենգության և մաքսային գործի հետ

կապված այլ հանցագործությունների կանխման, խափանման, հայտնաբերման, բացահայտման ժամանակ իրավունք ունեն զենք գործադրել՝

~~Կառավարության սահմանած ցանկում ընդգրկված պաշտոններ զբաղեցնող մաքսային մարմնի հանրային ծառայողներին ծառայողական պարտականություններ կատարելիս իրավունք է տրվում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կրելու, պահելու և օգտագործելու զենք:~~

~~2. Զենք կրելու, պահելու և օգտագործելու իրավունք ունեցող մաքսային մարմնի հանրային ծառայողներն իրավունք ունեն դա գործադրել՝~~

1) քաղաքացիներին՝ նրանց կյանքի կամ առողջության համար վտանգավոր հարձակումից պաշտպանելիս.

2) Մաքսային մարմնի հանրային ծառայողի վրա կատարվող հարձակումը հետ մղելու համար, երբ նրա կյանքին կամ առողջությանը վտանգ է սպառնում, ինչպես նաև նրա զենքին տիրանալու փորձը կանխելիս.

3) ծանր կամ առանձնապես ծանր հանցանք կատարելու պահին կամ հանցանք կատարած լինելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի առկայության դեպքում բռնված և փախուստի փորձ կատարող, ինչպես նաև զինված կամ խմբակային դիմադրություն ցույց տվող անձանց ձերբակալելիս.

4) մաքսային մարմնի տնօրինության տակ գտնվող շենքերի, շինությունների և տարածքների վրա, ինչպես նաև մաքսային մարմնի հանրային ծառայողի կողմից իրականացվող ուղեկցման և ապրանքների տեղափոխման ժամանակ խմբային կամ զինված հարձակումը հետ մղելիս:

~~1) իրենց և (կամ) այլ անձանց վրա կատարված հարձակումը կանխելու համար, կամ եթե առկա է նրանց կյանքին կամ առողջությանն սպառնացող իրական վտանգ.~~

~~2) զենքի կամ հատուկ միջոցների հափշտակման փորձը կանխելու համար:~~

2. Մաքսային մարմնի հանրային ծառայողներն իրավունք ունեն զենք օգտագործել՝

1) մարդկանց կյանքին, առողջությանն անմիջականորեն սպառնացող կենդանիներին վնասազերծելիս.

2) զենք օգտագործելու կամ գործադրելու մտադրության մասին նախազգուշական կրակոց արձակելիս, տագնապ հայտարարելիս կամ օգնության կանչելիս:

~~3. Մինչև զենքի գործադրումը մաքսային մարմնի հանրային ծառայողը պետք է կատարի նախազգուշական կրակոց, բացառությամբ սույն օրենքի 26-րդ հոդվածի երրորդ մասով նախատեսված դեպքերի:~~

3. Արգելվում է զենքի գործադրումը հղիության նկատելի նշաններով կանանց, ակնհայտ հաշմանդամների և անչափահասների նկատմամբ (բացառությամբ նրանց կողմից բաղաքացիների կյանքի համար վտանգավոր զինված կամ խմբակային հարձակման և զինված դիմադրության դեպքերի), ինչպես նաև երբ զենքի գործադրումից կարող են տուժել այլ անձինք:

~~հղիության կամ հաշմանդամության ակնհայտ նշաններ ունեցող անձանց և անչափահասների նկատմամբ, բացառությամբ նրանց կողմից զինված դիմադրություն ցույց տալու և մաքսային ծառայողի կյանքին և առողջությանն իրական վտանգ սպառնացող գործողություններ կատարելու դեպքերի:~~

4. Կոմիտեի սպառազինության մեջ կարող են ընդգրկվել «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքով նախատեսված զենքի համապատասխան տեսակներ: Կոմիտեի սպառազինության մեջ ընդգրկվող զենքի տեսակները՝ ըստ Կոմիտեի կառուցվածքային ստորաբաժանումների, պաշտոնների և ծառայողական պարտականությունների, սահմանվում են մաքսային մարմնի ղեկավարի հրամանով:

5.Մաքսային մարմնի ստորաբաժանումներում գտնվող զենքի հաշվառումը, մաքսային մարմնի հանրային ծառայողներին՝ ըստ գործառույթների, զենք տալու, նրանց կողմից զենքը հանձնելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են մաքսային մարմնի ղեկավարի հրամանով:

~~5. Մաքսային մարմնի հանրային ծառայողներին զենքով ապահովելու կարգը, զենքի ու ռազմամթերքի ցանկը սահմանում է Կառավարությունը:~~

(29-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-263-Ն, լրաց. 21.01.20 ՀՕ-18-Ն, փոփ. 26.05.21 ՀՕ-216-Ն)

(21.01.20 ՀՕ-18-Ն օրենքն ունի անցումային դրույթ)